

**SUPERIOR COURT OF CALIFORNIA, COUNTY OF LOS ANGELES  
JUVENILE COURT**

**Կալիֆորնիայի Առաջին ատյանի դատարան, Լոս Անջելես քառնթի,  
Անչափահասների հարցերով դատարան  
Ճանուցում Մշտական ծրագրի հարցով նիստն ընտրելուց ու այն  
գումարելուց հետո բողոքարկման իրավունքների մասին (WIC § 366.26)**

***Բողոքարկման իրավունքի մասին ծանուցագիր  
(Cal. Rules of Ct., rule 5.590(a))***

Բարեկեցության և հաստատությունների օրենսգրքի բաժին 366.26-ի ներքո (Welfare and Institutions Code section 366.26) Դատարանը հրամայել է մշտական ծրագիր ընդունել: Եթե ցանկանում եք բողոքարկել այդ հրամանը, ապա անհրաժեշտ է հրամանից հետո 60 օրվա ընթացքում դատարան ներկայացնել Բողոքարկման ծանուցագիր:

**ՀԱՆՁՆԱԿԱՏԱՐՆԵՐԻ ԿԱՄ ՀԱՇՏԱՐԱՐՆԵՐԻ ԱՌՋԵՎ ԼՍՈՒՄՆԵՐԻՆ  
ԸՆԴՈՒՆՎՈՂ ՀՐԱՄԱՆՆԵՐ**

***Վերալսման իրավունքի ծանուցագիր  
(Cal. Rules of Ct., rule 5.540 & 5.542)***

Եթե Ձեր գործը լսել է հաշտարարը կամ հանձնակատարը, ապա, հաշտարարի կամ հանձնակատարի եզրակացության ու հրամանի պատճենները ստանալուց հետո 10 օրվա ընթացքում, կարող եք այդ հարցով վերալսում խնդրել: 10 օրվա ընթացքում Անչափահասների դատարանը պետք է ստանա պահանջվող ձևերը՝ Վերալսման ու հրամանի հարցերով դիմումն ու Վերալսման հիմքերի մասին հայտարարությունը, ծանուցումը հանձնելու ապացույցի հետ մեկտեղ: Ձևերը կարելի է գտնել Դատարանի քարտուղարությունում՝ 2-րդ հարկում: Խնդրում ենք նշել՝ անչափահասների հարցերով ո՞ր լսման համար եք վերալսում հայցում: Ձեզ փոստով կտեղեկացնեն՝ արդյո՞ք վերալսման դիմումը բավարարվել է, թե՞ մերժվել: Եթե բավարարվել է, ապա վերալսման օրը ծանուցման մեջ նշված կլինի:

Եթե վերալսման դիմումը մերժվել է, ապա իրավունք ունեք բողոքարկել այդ մերժումը: Բողոքարկման դիմումն անհրաժեշտ է ներկայացնել հրամանի պատճենը ստանալուց հետո 60 օրվա ընթացքում, կամ վերալսման դիմումի մերժման մասին հրամանը հրապարակվելուց հետո 30 օրվա ընթացքում, որ օրը որ ավելի վաղ վրա հասնի:

**SUPERIOR COURT OF CALIFORNIA, COUNTY OF LOS ANGELES  
JUVENILE COURT**

***Բողոքարկման իրավունքի մասին ծանուցագիր  
(Cal. Rules of Ct., rule 5.590(a))***

Եթե Ձեր գործը լսվել է հաշտարարի կամ հանձնակատարի կողմից, ապա իրավունք ունեք բողոքարկել դատական իրավասության առկայությունը հաստատող հրամանն ու հարցին լուծում տալու հրամանը՝ հաշտարարի կամ հանձնակատարի հրամանը վերջնական դառնալուց հետո 60 օրվա ընթացքում: Բացառությամբ այն դեպքերի, երբ վերալսում է շնորհվել, հաշտարարի կամ հանձնակատարի հրամանը վերջնական է դառնում հրամանի պատճենը Ձեզ ներկայացվելուց հետո 10 օրվա ընթացքում: Հետագայում ևս, որևէ այլ հրամանի կապակցությամբ բողոքարկման ծանուցագիր ներկայացնելիս անհրաժեշտ է պահպանել նույն վերջնաժամկետները:

**ԲՈՒՆՈՐ ԿԱՐԳԻ ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ ԿԻՐԱՌՎՈՂ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ**

Բողոքարկման ծանուցագիրը պետք է ներկայացնել անչափահասների դատարան, այլ ոչ Վերաքննիչ դատարան: Բողոքարկման ծանուցագիրը պետք է ստորագրեք Դուք, կամ Ձեր փաստաբանը: Եթե բողոքարկում եք, սակայն փաստաբան վարձելու համար բավարար դրամական միջոցներ չունեք, ապա Վերաքննիչ դատարանը կարող է փաստաբան նշանակել, ով բողոքարկման գործընթացում կներկայացնի Ձեզ: Բողոքարկման նպատակներով, Դուք ունեք արձանագրության պատճենն անվճար ստանալու իրավունք: (Cal. Rules of Ct., rule 5.590(a)(3) & (4)):